

ԿԱՐԾԻՔ

Միրանուշ Փարսադանյանի՝ «Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական ժառանգությունը» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Հին և միջնադարյան գրականությունից նորին անցման շրջանում՝ շուրջ 200 տարում ստեղծված հայ կլասիցիզմի ողջ գրականությունն այսօր, ցավոք, համաժողովրդական սեփականություն չէ և մատչելի է միայն գրաբարին տիրապետող գիտական նեղ շրջանակներին: Հայկական կլասիցիզմի պատմությունն ու տեսությունը ներկայացնելիս գրականագետները կենտրոնացել են գլխավորապես Մխիթարյան կլասիցիստներից խոշորագույնի՝ Արսեն Բագրատունու ստեղծագործության վրա: Այսպես են վարվել Մ. Աբեղյանը, Ա. Ինճիկյանը, Էդ. ու Աշխ. Ջրբաշյանները, Մ. Թադևոսյանը, Պ. Խաչատրյանը, Վ. Դևրիկյանը և հին ու նոր մյուս ուսումնասիրողները: Գաղտնիք չէ, որ հայկական կլասիցիստական գրականության գնահատման հարցում ոմանց համար կողմնորոշիչ է եղել նաև Մ. Աբեղյանի օբյեկտիվ, սակայն խիստ գնահատությունը, ըստ որի՝ «բռնահանգի վարպետ» հայ կլասիցիստները, անգամ «Հայկ դյուցազն» դյուցազներիգության հեղինակ Ա. Բագրատունին, խիստ գերազնահատված են իրենց արժանիքների համեմատ:

Հայկական կլասիցիզմի մյուս խոշոր ներկայացուցիչը՝ ծնունդով վանեցի, Պոլսում կրթություն ստացած, գերազանցապես Չմյուռնիայում տասնամյակներ շարունակ իր գրական և մանկավարժական գործունեությունը ծավալած ոչ Մխիթարյան Հովհան Վանանդեցու ստեղծագործությունը նույնպես ենթակա է եղել այս խստությանը: Թերևս այս է գրականագետների մենագրություններում, հոդվածներում և ուսումնասիրություններում նրան հպանցիկ անդրադառնալու և հատուկ՝ առանձին ուսումնասիրության չարժանացնելու պատճառներից մեկը:

Այս պարագայում կարևորություն է ստանում Միրանուշ Փարսադանյանի՝ Ժ. 01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը, որը, փաստորեն, Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական – գեղարվեստական և հոգևոր կրոնական ժառանգության առաջին ամբողջական գիտական քննությունն է: Ի դեպ, մեզ թույլ ենք տալիս միջանկյալ ասելու, որ վճռաբար դեմ ենք հայ գրականության պատ-

մության ներկա պարբերացմանը, որովհետև չգիտես ինչ տրամաբանությամբ հրաժարվել են դեռևս 5-րդ դարում կազմավորված Մատենադարանի ձեռագրական և մեր ժողովրդի կազմավորման շրջանը պատկերող գրական-գեղարվեստական մեծ հարստությունը ճիշտ անվանելուց՝ հին գրականության ունենալու իրավունքը թողնելով հատկապես այն չունեցողներին ու մանավանդ աղբբեջանցիներին: Ինչ են Խորենացու վկայած «անթիվ քանակությամբ» մեհենական, գրուցից մատյանները, առասպելներն ու վիպասանքները, եթե ոչ հայոց հին գրականություն: Հիմա ստացվում է, որ աղբբեջանցիներն ունեն պարսիկներից, մեզնից և ուրիշներից կողոպտած և սեփականաշնորհած հին գրականություն, իսկ մենք չունենք կամ չենք ունեցել: Սա ի միջի այլոց, և, իհարկե, այստեղ քննելու խնդիր չէ. թողնենք այն պատկան մարմիններին և անցնենք բուն խնդրին: Սկզբից ևեթ հավաստենք, որ Ս. Փարսադանյանը XVIII-XIX դդ. գրական-մշակութային այս երևելի գործչին՝ Ջմյունիայի Մեսրոպյան վարժարանում շուրջ երկու տասնամյակ աստվածաբանություն և հայկաբանություն դասավանդած Հովհաննես Միրզայան Վանանդեցուն, գնահատել է ըստ արժանվույն և նրա գրական ժառանգությունը համակողմանիորեն դիտարկել եվրոպական ու հայ կլասիցիզմի, հայ գեղարվեստական մտքի զարգացման համապատկերում: Իսկ սա լուրջ հայտ է գիտության սպարեզ մտնող երիտասարդ հեղինակի կողմից, որի աշխատության գիտական արժանավորությունները կներկայացվեն ստորև:

Լավ տպավորություն է թողնում գրականության ցանկի հետ միասին 156 էջ կազմող ատենախոսությունն իր ընդհանրության մեջ: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և բավական ընդգրկուն գրականության ցանկից: Ընդ որում, այդ ցանկում մատնանշված ավելի քան հարյուր միավորների մեջ են ոչ միայն նյութին առնչվող գրեթե ողջ գեղարվեստական ու գիտական գրականությունը, այլև Մատենադարանի մի շարք ձեռագրեր և մեծ քանակով հնատիպ մամուլ և գրքեր:

Ներածության մեջ, կանոնակարգի պահանջի համաձայն, ներկայացվում են թեմայի արդիականությունը, հարցի պատմությունը կամ թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, պարզաբանվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, արդիականությունն ու գիտական նորույթը:

Միայն մի հեղինակի խնդիր չէ սա. այն պահանջում է ողջ հայկական կլասիցիզմին և նրան առնչվող մեծածավալ գրականության ուսումնասիրություն: Նման աշխատանք

հաջողությամբ կատարելու համար պետք է գրական բացարձակ գրագիտության, գրականագետ - բանասերի բարեխղճության, համառ աշխատասիրության հետ միասին՝ գրաբարով, այն էլ կլասիցիստների վերամբարձ, ծանր ու խրթին գրաբարով սկզնադբյուրներ ուսումնասիրելու կարողություն, հավաքած փաստական նյութը դասդասելով համադրելու և քննությամբ ընդհանրացումներ կատարելու կարողություն: Հայցորդի այս անվիճելի ունակություններն ակնառու են ատենախոսության բոլոր երեք գլուխներում և գիտական արդյունքներն ամփոփող հիմնավոր եզրակացություններում:

Չի կարելի ասել, թե Հ. Մ. Վանանդեցին ու նրա գրական ժառանգությունը մինչ այս ատենախոսությունը անտեսված են եղել, ընդհակառակը՝ նա կլասիցիստների մեջ ամենից հաճախ հիշվող անուններից է Բագրատունուց հետո: Հայկական կլասիցիզմի պատմությունն ու տեսությունն ուսումնասիրած գրականագետներն իրենց աշխատություններում իհարկե անդրադարձել են նրան, բայց ինչ չափով: Յուրաքանչյուր հետազոտող այս հեղինակին դիտարկել է իր հետաքրքրությունների շրջանակում, և նրանց խոսքը եղել է ոչ թե խորքային, այլ հպանցիկ և հաճախ կրել է նկարագրական-տեղեկատվական բնույթ, որովհետև նրանց հիմնախնդիրը Վանանդեցին ու նրա ստեղծագործությունը չեն եղել: Լավագույն դեպքում նրա երեք մեծ պոեմները և Կոմիտասի մեղեդիավորումով լայնորեն տարածված «Առ Հայաստան» բանաստեղծությունը դիտվել են որպես հայկական կլասիցիզմի բնորոշ արտահայտություններ:

Նախորդ գրեթե բոլոր ուսումնասիրողներն այդպես են վարվել (ի դեպ, հայցորդն արժանավորապես գնահատել է նրանց): Շատերին կողմնորոշել, սակայն նաև կաշկանդել է Մ. Աբեղյանի թեև անկողմնակալ, բայց և խիստ գնահատականը, ըստ որի՝ «բռնահանգի վարպետ» հայ կլասիցիստները, անգամ Ա. Բագրատունին, խիստ գերագնահատված են իրենց արժանիքների համեմատ, քանի որ նրանք ինքնուրույն գեղարվեստական լուրջ արժեքներ գրեթե չեն ստեղծել: Բնականաբար, այս խստահայեցությունը վերաբերել է նաև Վանանդեցուն, բայց անկողմնակալ հայցորդին դա չի խանգարել՝ ստեղծելու Հ. Մ. Վանանդեցու գեղարվեստական և հոգևոր - կրոնական ժառանգությունն իր ամբողջության մեջ հանգամանորեն քննող և գնահատող գիտական պատշաճ մակարդակի ատենախոսություն: Նպատակահարմար կառուցվածքը, գլուխների խոսուն վերնագրերը ատենախոսության հեղինակի՝ նյութին կատարելապես տիրապետելու վկայությունն են և պայմանավորված են արդիական հարցադրումների և դրանց լուծումների այն համակարգով, որի հաջորդակարգությամբ ընթացել է գիտական քննությունը:

Հայտնի է, որ Հ. Մ. Վանանդեցին՝ որպես մտածող և գեղագետ, մեծ կարևորություն է տվել քրիստոնեությանը և հայության կյանքում նրա խաղացած պատմական դերին: Այս պատճառով էլ քրիստոնեական մտածողությունը դրսևորվել է ոչ միայն նրա զուտ կրոնական բնույթի աշխատություններում, այլև հենց գեղարվեստական երկերում:

Ի տարբերություն եվրոպականի, որ պատկերման նյութ էր դարձնում Անտիկ դարաշրջանի հունա-հռոմեական գրական ու առասպելաբանական թեմաները, հայ կլասիցիստների, նաև Վանանդեցու երկերի նյութը հայոց պատմության տարբեր դրվագներն են՝ գեղարվեստականացված հեղինակի աշխարհընկալմամբ և կերպավորման կլասիցիստական սկզբունքներով:

Արփին՝ «Առաւօտ լուսոյ արեգակն արդար»-ը, քրիստոնեական լույսն է, որն առկա է Վանանդեցու «Արփիական Հայաստանի» երկի ոչ միայն վերնագրում, այլև պոեմի ութ գլուխներից յուրաքանչյուրի շարադրանքում:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է «Հայոց դարձի գեղարվեստական մարմնավորումը» և նվիրված է Վանանդեցու այս վիպերգի քննությանը: Հիմնականում Ագաթանգեղոսի պատմության գեղարվեստականացումով Վանանդեցին խորությամբ պատկերել է «արփիականի»՝ քրիստոնեության ընդունման պատմությունը: Իրական ու լեգենդային դեպքերի, դեմքերի հետ միասին երկում ներառված են և տվյալ դարաշրջանում գործող հնարավոր հավելյալ դեմքեր և եղելություններ:

Վիպերգի կառուցվածքային ու գեղարվեստական յուրահատկությունները քննելիս դրսևորվել է Փարսադանյան բանասեր - գրականագետի մտածողության մի կարևոր առավելությունը. բացի այն, որ նա հիմնավորում է մուսային դիմելու դասական ավանդույթի կիրառման անհրաժեշտությունը և ութ երգ - գլուխների մեկնական նախաբանները, 10 հազար տողանոց այդ պոեմում նա համեմատելով ու համադրելով ցույց է տվել, թե գեղարվեստական պատկերի մեջ գործողության որ մասն է զարգանում Ագաթանգեղոսի, Խորենացու, Ջենոբ Գլակի վկայած փաստերի ու եղելությունների ընթացքով, և որոնք են հեղինակային այն հավելումները, որոնք տրամաբանորեն ու գեղագիտորեն շաղկապված են պատմական հենքին:

Հայցորդը ճիշտ է նկատել, որ Վանանդեցին թե՛ այս, թե՛ մյուս պոեմներում սկզբնաղբյուրներով վկայված իրադարձությունները բացարձակ նույնությամբ չի վերապատկերել, այլ դեպքերը ներկայացրել է իր գեղագիտական նպատակադրումներին համապա-

տասխան՝ հարստացնելով դրանք ստեղծագործական երևակայությամբ և ըստ անհրաժեշտության տեղափոխելով: Անշուշտ կարևոր են և՛ պատմական ու հավելյալ անձերի կերպավորումները, և՛ այն, որ որոշ կարևոր դեպքեր ներկայացվում են ոչ թե ըստ սկզբնաղբյուրներում եղածի, այլ միջնորդավորված՝ դայակի պատումներով:

Հայցորդը մատնացույց է անում նաև Տրդատ արքայի դիվանադպիր Ագաթանգեղոսի երկից հատվածներ, որոնք Վանանդեցին վերածել է չափածոյի: Հարազատ մնալով պատմական սկզբնաղբյուրներին՝ Վանանդեցին նաև ձգտել է պահպանել դարաշրջանի բնորոշ գուներանգները, կերպավորել իդեալականացված Գրիգոր Լուսավորչին, Խոսրով Մեծին, Տրդատին, Անակին, Դիոկղետիանոսին և մյուսներին:

Երկրորդ գլխում քննաբանվել է Վանանդեցու մյուս երկու վիպերգերը՝ «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ, և Արայի» և «Ոսկի դար Հայաստանի»: Արտաքուստ անհամատեղելի թվացող այս երկերը միևնույն գլխում կարող էին քննարկվել համանման բովանդակային ու գեղարվեստական յուրահատկությունների, գաղափարական ու գեղագիտական ընդհանրությունների միասնական հիմքով: Այդպիսին կարող էր լինել բոլոր հայ կլասիցիստ հեղինակներին միավորող հայոց պատմությունը, որի դրվագների կլասիցիստական գեղարվեստականացումով էլ նրանք հաստատում էին իրենց պատմահայեցողությունն ու գեղագիտական ըմբռնումները:

Համոզիչ են հայցորդի այն բացատրությունները, թե քրիստոնեական միաստվածությունն դավանող Վանանդեցին ինչպես է կերպավորել բազմաստվածության ժամանակների մեր հեթանոս նախնիներին՝ Հայկին, Արամին ու Արային, և մեծարել ու փառաբանել է նրանց սխրանքները: Սա, անշուշտ, խորենացիական հստակ ու բանաձևային ազգային մտածողությամբ՝ հեթանոսական և քրիստոնեական դարաշրջանները չհակադրելու ողջամտության արձագանքն էր նոր ժամանակներում: Ինչպես ճիշտ նկատել է Ս. Փարսադանյանը, միևնույն գլխում քննվող երկու պոեմների պատմական ատաղձն էլ Խորենացու «Հայոց պատմությունն» է, բայց, դարձյալ հիշված ավանդույթի ուժով, Վանանդեցին չի կրկնել պատմահոր նշած ժամանակագրորեն ճշգրիտ դեպքերի ընթացքը, այլ ինքնատիպ մոտեցում է ցուցաբերել պատմական դեմքերին ու եղելություններին: Ո՛չ բաբելոնյան աշտարակաշինության, ո՛չ Ջրհեղեղի ու Նոյի որդի Հաբեթի, վերջինիս ժառանգներ Հայկի ու նրա հաջորդների գործողությունները նույնությամբ չեն վերաշարադրված, այլ ստեղծագործական մոտեցմամբ:

Ճիշտ է հայցորդի և այն մոտեցումը, որ Հայկին, Արամին ու Արային ներբողելով ու բարձր ոճով փառաբանելով՝ Վանանդեցին ընդգծել է նրանց հայրենասիրությունն ու ազատասիրությունը, քաջությունն ու ազնվությունը, հերոսական բնավորությունը՝ որպես նրանց կերպարներին բնորոշ և նոր ժամանակների մարդու համար օրինակելի հատկանիշներ: Ընդ որում՝ Վանանդեցու բոլոր պատմական-իրական ու երևակայությամբ հավելյալ հերոսները՝ պատմական-առասպելական գծերի ու հատկանիշների պահպանումով, պոեմներում ցուցադրված են կենսական հանգամանքներում և ներկայացված են իրենց հոգեբանությամբ ու մարդկային դրամայով: Հայցորդն իրավացիորեն սա համարել է Վանանդեցու բերած կարևոր նորություն հայ նոր գրականության մեջ:

Սակայն և՛ այս, և՛ մյուս պոեմները դիպաշարերում չունեն գործողությունների նպատակալաց զարգացման կապակցված ու հստակորեն տեսանելի ընթացք, ինչպես Բագրատունու դյուցազնեգության մեջ է, և փառաբանված հերոսներն ավելի ներկայացված են ներբողային դրվագներում: Այս կապակցությամբ ուշադրության արժանի է և հայցորդի մի այլ դիտարկում: Տեսական մակարդակում նա վիճարկում է քննվող երկերը ցայսօր գրականագիտության կողմից պոեմ կամ վիպերգ անվանելը՝ գտնելով, որ իրականում Վանանդեցին ստեղծել է ընդարձակ ներբողներ, ուրեմն՝ այդ երկերը ներբողներ կամ ներբողյաններ վերանվանելու առաջարկը պետք է լրջորեն քննարկել:

Ընդունելի են այն դիտարկումները, որոնցով Վանանդեցու երկերը ներկայացվում են, ասենք, Բագրատունու, Սրվանձտյանի և ուրիշ հեղինակների ստեղծագործությունների բաղադրությամբ, ինչպես և Բագրատունու ու Վանանդեցու առնչությունները գնահատելիս: Բանասիրական լուրջ դիտարկում է, օրինակ այն, որ նախ Վանանդեցին է իր պոեմում կերպավորել Հայկ նահապետին, և Բագրատունին իր «Հայկ դյուցազնը» ստեղծել է՝ նախապես ծանոթ լինելով Վանանդեցու ստեղծագործության ձեռագրին: Երկուսն էլ Հայկի՝ լայնալիճ աղեղով ու երեքթևյան նետով բռնակալ Բելի սպանությունը պատկերելիս օգտագործել են Խորենացու նույն սկզբնաղբյուրը, սակայն յուրաքանչյուրն ստեղծել է նույն երևույթի՝ իր պատկերավոր մտածողությանը և աշխարհայացքին բնորոշ գեղարվեստական պատկեր: Այդ տարբերությունը դրսևորվում է հայցորդի նկատած մի բառով՝ **դիւարնակ**, որով Վանանդեցին բնորոշել է չար ուժերի մարմնացում կործանված Բելի դիվային էությունը:

Ինչպես ժամանակին ակադ. Էդ. Ջրբաշյանն է ցույց տվել, Հ.Մ. Վանանդեցու բոլոր պոեմներն էլ ունեն ուսուցողական-դիդակտիկ բնույթ: Վերջին երկի՝ 5 600 տողից

կազմված «Ոսկի դար Հայաստանի» պոեմի չորս գլուխներում, որոնք նույնպես երգ են անվանված, հեղինակը ջանացել է պատկերել հայոց պատմությունն ու աշխարհագրությունը արարչագործական ժամանակներից մինչև իր օրերը՝ Արևելյան Հայաստանը ռուսական տիրապետության տակ անցնելը, մինչև «Ի Մոսկովաց հայեաց կայսեր՝ զոր Հայոց տալ գովութիւն», այսինքն՝ Ռուսաստան գաղթած և այդ կայսերապետությանը մեծ ծառայություններ մատուցած հայերին ցարերի առանձնաշնորհումներ և արտոնություններ պարգևող հրովարտակները, մի բան, որ հետագայում կիրառել է նաև Մ. Նալբանդյանը: Այս երկը ևս ատենախոսության էջերում քննված է գիտական նույն բարեխղճությամբ, համադրումներով ու զուգահեռումներով:

Որոշակի կշիռ ունի նաև ատենախոսության երրորդ՝ «Հոգևոր կրոնական գործերը» գլուխը, որի երկու ենթագլուխներում քննված ու արժևորված են Վանանդեցու երկու՝ «Ճառ ներբողական ի Սուրբ Խաչն Քրիստոսի եւ պատմագրական առասացութիւն ի Սուրբ Նշանն Վարագայ» և «Կերակուր քահանայից» ստեղծագործությունները: Այստեղ հայցորդը, զուտ կրոնական բովանդակությունը նկատի ունենալով, խելամտորեն առանձնացրել «Արփիական Հայաստանի» պոեմից և բնութագրել է նրա այն հատվածը, որում սուրբ Գրիգոր Լուսավորիչը մեկնաբանում է Հիսուսի վարդապետությունն ու հրաշքները: Տասնամյակներ շարունակ ԵՊՀ-ում հայկական կլասիցիզմ, երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում երկու տարի Նոր կտակարան դասավանդելու փորձից գիտենք, որ կրոնական ուղղվածությամբ այս երկերը բնութագրելու համար անհրաժեշտ են աստվածաբանական որոշակի իմացություններ, որոնք հայցորդը դրսևորել է ատենախոսության թե՛ նախորդ գլուխներում և թե՛ մանավանդ երրորդ գլխի այս երկու ենթագլուխներում:

Բնական է, որ աթեիզմի դարաշրջանի գրականագետները պետք է խուսափեին Հ. Մ. Վանանդեցու զուտ կրոնական գործերին անդրադառնալուց կամ շրջանցեին դրանք: Այս պատճառով հայտնի են միայն Մ. Աբեղյանի համառոտ բնութագրումները միջնադարի հոգևոր քերթության ավանդների շարունակությամբ ստեղծված քնարական ներբողի՝ Վարագա Սուրբ Նշան վանքի ստեղծման պատմության և նրա գորավոր Խաչի մասին «Ճառ ներբողական...» երկի վերաբերյալ: Բայց ահա մեր առջև է բանասիրական մի նոր քննություն, որով պարզվում է այս երկի հոգևոր - գրական և Հովհաննես Բոնա կաթողիկ կարդինալի 1760 թ. հրատարակած «Կերակուր քահանայից» երկի հիման վրա Հ. Մ.

Վանանդեցու ստեղծած տարբերակի կրոնախրատական արժեքը, որն ըստ էության քահանայից դասի վարքագծի և սննդակարգի կանոնագիրք է:

Ատենախոսության գիտական արժանիքները հարուստ են ու աներկբա, սակայն առկա են նաև մանր թերացումներ ու վրիպումներ, որոնցից մի երկուսի վրա, առանց մանրամասների մեջ խորանալու, հրավիրում ենք հայցորդի ուշադրությունը:

Նկատելի է Հ. Մ. Վանանդեցու ստեղծագործություններից մեջբերումների առատություն: Գուցե դա աշխատանքի բնույթն է թելադրում կամ երիտասարդ գիտնականի՝ շատ բան ասելու ձգտումը: Սակայն, այնուամենայնիվ, կարծում ենք՝ աշխատանքը տպագրության պատրաստելիս պետք է դրանք թեթևացնել կամ խմբավորել, որից կշահի աշխատանքի գիտական վերլուծական կողմը:

Ատենախոսության 63 – 64-րդ էջերում հայցորդն իզուր է տարակուսել Հ. Մ. Վանանդեցուց իր բերած քաղվածքում դուրսագումներ Հայկի, Արամի և Արայի կողքին հիշված **մանուկ** կամ **մանկանց** բառի շուրջ: Մենք էլ ենք նույն քաղվածքը բերում.

Որոց վեհագնեայ քաջությանցն արձան

Այս բերթված կացցե մանկանց յանդիման:

Իհարկե, հայցորդը վկայում է **մանուկ** բառի բառարանային իմաստները և կանգ առնում հատկապես **պատանի, երիտասարդ** նշանակությունների վրա: Բայց նրան հիշեցնենք, որ **մանուկ**-ը հնում ուներ **կտրիճ, քաջ, հերոս, ֆեդա** նշանակությունները և սրանց է առնչվում առևտրական քարավաններին ուղեկցող անմորուս և մորուսավոր մանուկների, տարատեսակ Թուխ Մանուկների պաշտամունքը: Ավելին՝ ոչ Խորենացու գրառած բանահյուսական պատառիկում վկայված, հազարամյակներ առաջ Տուհաց գավառից «գՔասաղ գետով, գՇրեշ բլուրով» Արմավիր հասնող, «գդուռն Հայոց Երուանդայ արքայի» կռող և կոփող առասպելի հերոս Վարդգես Մանուկն էր երեխա կամ պատանի (սա հին գրականություն չէ), ոչ Էպոսի Խոր Մանուկը, ոչ հայրենների՝ **մանկտիր** կոչականը, ոչ Աբովյանի վեպի՝ հերոսական բնավորությամբ Արծափեցի Մանուկը, ոչ Մանուկ Աբեղյանը, ոչ էլ բոլոր Թուխամանյանները, Խաչմանուկյաններն ու Մանուկյանները: Նրանք միայն երեխա կամ պատանի չեն: Իսկ Վանանդեցին, ինչպես տեսանք, **Մանուկ** անունը հիշում է իր փառաբանած քաջ հերոսների՝ դուրսագումներ Հայկի, Արամի և Արայի զուգահեռում, ուրեմն՝ **դուրսագն, հերոս, կտրիճ** և ոչ թե սովորական **պատանի** կամ **երիտասարդ** նշանակությամբ:


Աշխատանքում նկատվում են նաև խմբագրման արժանի մեկ – երկու անհաջող ձևակերպումներ ու անհարթ նախադասություններ: Բայց սրանք կաթիլ են ծովի մեջ և բնավ չեն ստվերում կատարված իրոք հաջողված աշխատանքը:

Ամփոփելով վերստին հավաստենք, որ մեր դատին ներկայացված ուսումնասիրությունը կարևոր ներդրում է հայ գրականագիտության մեջ: Քիչ ուսումնասիրված գրաբարագիր կլասիցիստ հեղինակի գրական ժառանգության վերաբերյալ հայցորդն ստեղծել է համակողմանի, լուրջ ու ծանրակշիռ գիտական աշխատանք, որը լիովին բավարարում է նման գործերին ներկայացվող պահանջները: Նշենք նաև, որ ԲՈԿ-ի կողմից ճանաչված գիտական պարբերականներում հրապարակված 7 հոդվածները և սեղմագիրը՝ իր ռուսերեն և անգլերեն ամփոփումներով, արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Այս հիմքով էլ հորդորում ենք ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի «003 Գրականագիտություն» մասնագիտական խորհրդին՝ Սիրանուշ Փարսադանյանին «Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական ժառանգությունը» ատենախոսության համար շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին նա միանգամայն արժանի է:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝  Ս. Պ. ՄՈՒՐԱՊՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Պրոֆ. Ս. Պ. Մուրադյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան՝  Ա. Ա. ԱՎԱԳՅԱՆ
Բ. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան

12.12.2022